ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

ՄԻԱՎՈՐՈՒՄ

ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

միջազգային երիտասարդական գիտաժողով

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР (АРЦАХА): ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ОМУСА
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН
2016

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (5Հ)+66.0+67.400
Լ 657

Խմբագրական խորհուրդ
ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Հ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Հ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Մարգարյան**, ք.գ.դ. **Ս.Մ.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Հ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия
д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

Լ 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (5Հ)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում, 2016

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ԱԽԱԱ բաժնի վարիչ, ԱրՊՀ, ՄՄՀ ավագ դասախոս, ի.գ.թ.
avetiq.hh@gmail.com

Սիրանուշ ՊԵՏԻԿՅԱՆ
Մեսրոպ Մաշտոց համալսարանի իրավագիտության ամբիոնի դոցենտ, ի.գ.թ., Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման նախագահ
spg.86@mail.ru

25-ամյա պետականություն ունեցող երկրորդ հայկական պետության՝ Արցախի Հանրապետության կարևոր ձեռքբերումներից մեկը, անշուշտ, Սահմանադրության ընդունումն ու նրա դրույթների կենսագործման 10-ամյա փորձն է:

Արցախի Հանրապետության Սահմանադրության գործողության առաջին տասնամյակը ցույց տվեց, որ այն ընդհանուր գծերով ի վիճակի է կարգավորել սահմանադրաիրավական բնույթի հարաբերությունները: Սակայն, բնական է, որ հասարակական հարաբերությունները քարացած չեն, այլ մշտապես փոփոխվում են՝ ամեն անգամ պահանջելով նոր լուծումներ, ուստի անհրաժեշտ է ժամանակի պահանջներին համապատասխան կատարելագործել Սահմանադրությունը, որը ոչ միայն պետք է բխի ժողովրդի կամքից ու շահերից, այլև երկարաժամկետ հեռանկարում ապահովի հասարակության կայուն ու ժողովրդավարական զարգացումը:

Սույն հետազոտության շրջանակներում Արցախի Հանրապետության գործող Սահմանադրության կատարելագործման հիմնական ուղղություններից կներկայացվեն երեքը՝ իրավունքի գերակայությունը, հանրաքվեն, իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը[1]:

Իրավունքի գերակայության սկզբունքը սահմանադրական ու օրենսդրական մակարդակների հիմնախնդիրներ լուծելու միջոց կարող է ծառա-

[1] Օրինակ, Վ.Զորկինն իրավական պետության էական հատկանիշների թվին է դասում՝ 1. իրավունքի գերակայությունը (ներառյալ մարդու իրավունքների առաջնայնությունը և իրավական օրենքի գերակայությունը), 2. ժողովրդաիշխանությունը, 3. Իշխանությունների տարանջատումը (Зорькин В. Конституционно-правовое развитие России. М.: Норма: ИНФРА М, 2011, էջ 53):

յել այն դեպքում, երբ ամրագրված լինի Սահմանադրության մեջ կամ ենթադրելի լինի դրա բովանդակությունը և ստեղծված լինեն անհրաժեշտ ու բավարար կառուցակարգեր դրա կենսագործումն ապահովելու համար: Վերլուծելով սահմանադրական ու օրենսդրական հարթություններում իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրվածության հարցը՝ գալիս ենք այն հետևության, որ եթե ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման առումով գոնե կիսալուծում առկա է, այսինքն այն ենթադրելի է որոշ հոդվածների վերլուծությունից, ապա նույնը չենք կարող ասել օրենսդրության առումով, որտեղ ամրագրված է օրենքի գերակայության սկզբունքը[1]:

Մեր խորին համոզմամբ՝ Արցախի Հանրապետության պարագայում անհրաժեշտ է ոչ թե պատճենել ու տեղայնացնել հիշյալ սահմանադրական արժեքը, այլ պետության սահմանադրական մշակույթի վրա հիմնվելով՝ մշակել Արցախի Հանրապետության իրավական կյանքում իրավունքի գերակայության գործողության հայեցակարգը՝ հաշվի առնելով դրա վերաբերյալ սահմանադրագիտության արդի նվաճումները, որոնք կարող են նպաստել այդ արժեքի լիարժեք իրացմանն ու դրա հիման վրա հասարակական կյանքն իրավունքի գերակայության վրա կառուցմանը:

Իրավունքի գերակայության վերաբերյալ միանշանակ մոտեցում և պատկերացում ձևավորելու նպատակով և հաշվի առնելով այն, որ վերջինս ամրագրված չէ ԼՂՀ Հիմնական օրենքում՝ առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայությունն ամրագրել բառացիորեն, ինչպես դա արտացոլված է բազմաթիվ երկրների սահմանադրություններում[2], սահմանել դրա իրացման կառուցակարգերը, օրենսդրության մեջ տալ դրա բնորոշումը և սահմանել որպես սկզբունք, իսկ գործադիր իշխանության կողմից մշակել և ընդունել դրա իրացման գործնական հայեցակարգ:

ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքը բառացիորեն ամրագրվելուց բացի անհրաժեշտ է նպատակաուղղված աշխատանքներ տանել մարդու և քաղաքացու կյանքում դրա կարևորության և հիմնարար նշանակության, դրանով ապրելու և ղեկավարվելու գաղափարի արմատավորման, ինչպես նաև քաղաքացիների մոտ իրավագիտակցության բարձր ու պահանջվող մակարդակ ապահովելու, քաղաքացիների կողմից իրավունքի գերակայության ընկալման ու իրավական և

---

[1] Արցախի Հանրապետության մի շարք օրենքներում, մասնավորապես՝ «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածում, «Քաղաքացիական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածում, «Բնապահպանական վերահսկողության մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածում, «ԼՂՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում որպես սկզբունք նշված է **«օրենքների գերակայությունը»:**

[2] Օրինակ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության 1982թ. Սահմանադրության (հոդված 5), Խորվաթիայի Հանրապետության 1990թ. Սահմանադրության (հոդված 3), Բոսնիայի և Հերցեգովինայի 1995թ. Սահմանադրության (հոդված 1.2) մեջ և այլն:

քաղաքական մշակույթի ելակետային տարր դարձնելու ուղղությամբ՝ դրան զուգահեռ վստահություն ու հարգանք դրսևորելով իրավակիրառ մարմինների նկատմամբ:

Արցախի Հանրապետության Սահմանադրության կատարելագործման հաջորդ ուղղությունը վերաբերում է հանրաքվեին, մասնավորապես՝ դրա նախաձեռնության իրավունքով օժտված սուբյեկտների շրջանակին:

ԼՂՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների եղանակով...»: Սահմանադրության 133-135 հոդվածներով նախատեսված սահմանադրական, օրենսդրական և պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերով հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտ չի հանդիսանում ժողովուրդը, այն դեպքում, երբ նման իրավունք վերապահված է բացառապես ժողովրդի կողմից ընտրված Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին, ինչպես նաև վերջիններիս կողմից ձևավորված կառավարությանը: Այստեղ խախտված է ոչ միայն հանրաքվե նախաձեռնելու ժողովրդի իրավունքը, այլև իրավական տրամաբանությունը:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն անկախության գործընթացը սկսել են համարյա միաժամանակ և մինչ օրս գտնվում են նույն իրավական հարթության վրա: Ուշագրավն այն է, որ հիշյալ բնագավառը կարգավորող իրավական ակտը՝ 1991թ. ապրիլի 2-ի «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը, հանրաքվեի նախաձեռնության իրավունքը վերապահում էր ՀՀ քաղաքացիներին[1] և ՀՀ Գերագույն խորհրդին, իսկ նորանկախ ԼՂՀ-ում քաղաքացիներին նման իրավունք վերապահված չէր:

Սովորաբար ժողովրդի կողմից հանրաքվե նախաձեռնվում է ստորագրություններ հավաքելու եղանակով: Այս առումով հետաքրքրական է այլ երկրների փորձի ուսումնասիրումը: Այսպես, Շվեյցարիայի Սահմանադրությամբ այդ թիվը 100 հազար է, Մակեդոնիայի Սահմանադրությամբ՝ 150 հազար, Վրաստանի Սահմանադրությամբ՝ 200 հազար, Բելառուսի Սահմանադրությամբ՝ 450 հազար, Իտալիայի Սահմանադրությամբ՝ 500 հազար և այլն[2]: Կարծում ենք, որ ԼՂՀ-ում այդ խնդրի լուծման համար առավել նպատակահարմար է Սահմանադրությամբ սահմանել հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի առն-

---

[1] Զարմանալին այն է, որ ՀՀ կազմավորման առաջին տարիներին ընդունված օրենքով ՀՀ քաղաքացիները համարվում էին հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտ, իսկ 1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով հանդերձ) ժողովուրդը զրկվեց այդ իրավունքից: Ի դեպ, նշված թերությունը շտկվեց 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով:

[2] Տե՛ս Շվեյցարիայի 1999թ. Սահմանադրության 138 հոդվածը, Մակեդոնիայի 1991թ. Սահմանադրության 130 հոդվածը, Վրաստանի 1995թ. Սահմանադրության 74 հոդվածը, Բելառուսի 1994թ. Սահմանադրության 74 հոդվածը, Իտալիայի 1947թ. Սահմանադրության 138 հոդվածը:

վազն 10 տոկոսի ստորագրությունների առկայության պահանջ[1]: Նշենք, որ 2015թ. մայիսի 3-ի դրությամբ ԼՂՀ-ում ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը կազմում էր մոտ 100 հազար[2]: Կարծում ենք, որ ստորագրությունների հստակ թիվ նշելն այնքան էլ արդարացված չէր լինի, քանի որ երկրի բնակչության թվաքանակի աճի կամ նվազման հետ զուգահեռ այդ թիվը մնալու է անփոփոխ, որը ոչ համամասն է լինելու ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների փաստացի թվակազմին:

Վերոհիշյալ հիմնախնդրի լուծման առնչությամբ առաջարկվում է Արցախի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարել որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ սահմանադրական, օրենսդրական ու պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերով հանրաքվեների սուբյեկտ ճանաչել ժողովրդին՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի առնվազն 10 տոկոսի ստորագրությունների առկայության պահանջով:

ԼՂՀ Սահմանադրության կատարելագործման վերջին ուղղությունն առնչվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին, որի գաղափարն ու կիրառությունը սկիզբ է առնում դեռևս պետության կազմավորման առաջին իսկ տարիներից:

Արցախի Հանրապետության Սահմանադրության վերլուծությունից պարզ է դառնում, որ այն կիսանախագահական պետություն է: Իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիմնախնդրին անդրադառնալիս հնարավոր չէ շրջանցել Նախագահի տեղի ու դերի մասին հարցը: Այս առումով առաջին հերթին պետք է անդրադառնալ Սահմանադրության 61 հոդվածի 2-րդ մասին, ըստ որի՝ «Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը»: Նշված սկզբունքի իրացման գործում Նախագահի դերը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ԼՂՀ Նախագահի աշխատակազմում կամ Նախագահին առընթեր ստեղծել մասնագիտացված ստորաբաժանում, որի հիմնական գործունեությունը կհանդիսանա Նախագահի կողմից Սահմանադրության հետևման և իշխանության երեք թևերի բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ գիտականորեն հիմնավորված և արհեստավարժորեն իրականացվելիք գործողությունների հիմնավորվածությունը ԼՂՀ Նախագահին ներկայացնելն ու դրանց ընթացքին հետևելը: Նման ստորաբաժանման առկայությունը Նախագահին հնարավորություն կտա նաև Սահմանադրության պահպանման շրջանակներում երկրում իրականացնել սահմանադրականության մշտադիտարկում:

---

[1] Համեմատության համար նշենք, որ «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Տեղական հանրաքվե նշանակելու համար անհրաժեշտ ստորագրությունների նվազագույն քանակը տվյալ տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 5 տոկոսից պակաս չպետք է լինի»:

[2] 2015թ. մայիսի 3-ի ԼՂՀ Ազգային ժողովի ընտրության քվեարկության արդյունքների ամփոփ տվյալները տե՛ս URL: http://cecnkr.am/%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D6%80/# (դիմելու ամսաթիվը՝ 13.10.2016):

Քննարկելով ԼՂՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև զսպումների և հակակշիռների կառուցակարգի արդյունավետության բարձրացման հարցը՝ Հեղինակներն առաջարկում են, որպեսզի ԼՂՀ պետական բյուջեով նախատեսված ծախսերի իրականացման արդյունքում յուրաքանչյուր եռամսյակը մեկ կառավարությունը հիմնավորված (փաստաթղթավորված) հաշվետվություն ներկայացնի Ազգային ժողով[1]: Ընդ որում, կառավարության կողմից տարվա ընթացքում 2 անգամ բյուջեի կատարողականը խախտումներով ներկայացնելը պետք է դառնա նրա հրաժարականի հիմք ու ամրագրվի Սահմանադրության և «Ազգային ժողովի կանոնակարգ» ԼՂՀ օրենքի մեջ:

Վերլուծության ենթարկելով ԼՂՀ-ում կառավարման համակարգերի մասին հարցը՝ կարծում ենք, որ 1994 թվականից մինչև ԼՂՀ Սահմանադրության ընդունումը երկիրը որդեգրել էր կառավարման նախագահական մոդելը, որին հաջորդել է ներկայիս կառավարման կիսանախագահական ձևը, որը, սակայն, զերծ չէ թերություններից ու սահմանադրական կիսալուծումներից: Վերջինս դրսևորվում է նրանում, որ երաշխավորված չէ միասնական գործադիր իշխանություն և բացակայում է գործադիր իշխանության (Հանրապետության Նախագահ և կառավարություն) իրական քաղաքական պատասխանատվությունը: Դրանից զատ, Հանրապետության Նախագահի ձեռքում կենտրոնացված է քաղաքական մեծ իշխանություն, սակայն գործադիր իշխանության համար Հանրապետության Նախագահը որևէ քաղաքական պատասխանատվություն չի կրում:

Ուսումնասիրելով և վերլուծելով իշխանությունների տարանջատման սկզբունքի իրացումը ԼՂՀ սահմանադրական լուծումներում՝ գալիս ենք այն եզրահանգման, որ գործադիր իշխանության երկվության, ինչպես նաև իշխանության ճյուղերի միջև զսպումների ու հակակշիռների մեխանիզմի անհստակության պարագայում կառավարման կիսանախագահական մոդելն այդքան էլ արդարացված չէ:

Հաշվի առնելով Արցախի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման մոդելի անկենսունակությունը և կիսանախագահական մոդելի հարուցած բազմաթիվ խնդիրները, ինչպես նաև նկատի ունենալով ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության դեռևս չլուծված լինելու իրողությունը և այս համատեքստում ուժեղ ու կենտրոնաձիգ իշխանության առկայության հրամայականը՝ Հեղինակները կարծում են, որ Արցախի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների դեպքում նախապատվությունը պետք է տրվի կառավարման նախագահական ձևին:

---

[1] «Ազգային ժողովի կանոնակարգ» ԼՂՀ օրենքի 81 հոդվածի 2-րդ մասում նշված է, որ «Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, Կառավարությունն Ազգային ժողով տեղեկանք է ներկայացնում բյուջեի կատարման ընթացքի մասին»: Նկատենք, որ տեղեկանքն իր բնույթով տեղեկատվական է, սովորաբար ընդունվում է ի գիտություն և որևէ իրավական հետևանք չի առաջացնում, ուստի պետության գլխավոր ֆինանսական փաստաթղթի նկատմամբ վերահսկողությունը հատկապես Ազգային ժողովի կողմից պետք է ավելի խստացվի, քանի որ իշխանության այդ երկու թևերը գտնվում են անհավասար պայմաններում:

Ավետիք Հարությունյան, Սիրանուշ Պետիկյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *Արցախի Հանրապետություն, Սահմանադրություն, կատարելագործում, իրավունքի գերակայություն, հանրաքվե, իշխանությունների բաժանում և հավասարակշռում*

Հոդվածում ներկայացվում են Արցախի Հանրապետության գործող Սահմանադրության կատարելագործման հիմնական ուղղություններից երեքը՝ իրավունքի գերակայությունը, հանրաքվեն, իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը: Հեղինակներն առաջարկում են իրավունքի գերակայության սկզբունքը Սահմանադրության և օրենսդրության մեջ ամրագրել բառացիորեն, հասարակության մեջ արմատավորել վերջինիս կարևորությունը, ինչպես նաև գործադիր իշխանության կողմից մշակել և ընդունել դրա իրացման գործնական հայեցակարգ: Առաջարկվում է նաև հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտ ճանաչել ժողովրդին, ինչպես նաև, հաշվի առնելով Արցախի Հանրապետությունում կառավարման մոդելների հարուցած խնդիրները, երկրում սահմանադրական բարեփոխումների իրականացման դեպքում նախապատվությունը տալ կառավարման նախագահական ձևին:

Аветик Арутюнян, Сирануш Петикян

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ СОВЕРШЕНСТВОВАНИЯ КОНСТИТУЦИИ РЕСПУБЛИКИ АРЦАХ

Ключевые слова: *Республика Арцах, Конституция, совершенствование, верховенство права, референдум, разделение и баланс властей*

В статье представляются три из основных направлений совершенствования действующей Конституции Республики Арцах: верховенство права, референдум, разделение и баланс властей. Авторы предлагают текстуально закрепить принцип верховенства права в Конституции и законодательстве Республики Арцах, укоренить необходимость последнего в обществе, а также разработать со стороны исполнительного органа власти и принять концепцию реализации данного принципа. Предлагается также признать народ субъектом, имеющим право инициировать референдум. Учитывая возникшие проблемы, связанные с моделями управления в Республике Арцах, следует, в связи с проведенными в стране конституционными реформами, дать приоритет президентской модели управления.

Avetik Harutyunyan, Siranush Petikyan

THE MAIN DIRECTIONS OF THE CONSTITUTIONAL IMPROVEMENT OR ARTSAKH REPUBLIC

Key Words: *Republic of Artsakh, Constitution, Improvement, Rule of Law, Referendum, Check and balances*

This article explores the three main directions of the improvement of the current Artsakh Republic Constitution: rule of law, referendum, check and balances. The authors suggest that the rule of law should be fixed in the Constitution and legislation, the importance of it should be inculcated in society, as well as, executive authority should developed and adopted the concept of practical realization of it. It is also suggested to recognize the people as a subject of referendum initiative, and also taking into account the issues of government models, in case of constitutional reforms, to give the preference to a presidential form of government.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանի ուղերձը «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի մասնակիցներին 4

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանի ողջույնի խոսքը «Արցախի 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» թեմայով միջազգային երիտասարդական գիտաժողովի մասնակիցներին 5

«ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ Ավետիք Հարությունյանի բացման խոսքը 7

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանի ուղերձը 9

Ն.Ի.Լոբաչևսկու անվան Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆ. Վերա Ռոմանովսկայայի ողջույնի խոսքը 10

ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

Օտտո Լուխտերհանդտ. Ադրբեջանի «բլիցկրիգը» Արցախի դեմ և միջազգային իրավունքը 11

Ալեքսանդր Մանասյան. Պատմությունը և իրավունքը ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացներում..... 21

Վլադիսլավ Գրուզդև. Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության պետականության հռչակման նախադրյալները 27

Զբիգնև Շմուրլո. Եվրոպայի շրջագծում կամ քաղաքակրթական ուղիների կենտրոնում. Հայաստանի և Արցախի ժամանակակից մարտահրավերները Լեհաստանի բնակիչների գիտակցության մեջ 35

Սերգեյ Մինասյան. Լեռնային Ղարաբաղում 2016թ. «ապրիլյան էսկալացիայի» որոշ ռազմաքաղաքական արդյունքներ 48

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ավետիք Հարությունյան, Սիրանուշ Պետիկյան. Արցախի Հանրապետության Սահմանադրության կատարելագործման հիմնական ուղղությունները .. 55

Անահիտ Մանասյան. ԼՂՀ Սահմանադրության կայունությունն ու զարգացումը՝ որպես երկրում սահմանադրականության ամրապնդման կարևորագույն երաշխիք 62

СОДЕРЖАНИЕ

Послание Президента Республики Арцах Бако Саакяна участникам международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы» ……..…….…. 4

Приветственное слово председателя Национального Собрания НКР Ашота Гуляна ……..……. 5

Приветственное слово председателя оргкомитета международной молодёжной научной конференции Аветика Арутюняна ……..…..… 7

Послание председателя постоянной комиссии по вопросам науки, образования, культуры, молодёжи и спорта Национального Собрания РА Артака Давтяна …….....……. 9

Приветственное слово заведующей кафедрой теории и истории государства и права Нижегородского государственного университета им. Н.И.Лобачевского, д.ю.н., проф. Веры Романовской ……..…… 10

ДОКЛАДЫ ПЛЕНАРНОГО ЗАСЕДАНИЯ

Отто Люхтерхандт. «Блицкриг» Азербайджана против Арцаха и международное право …… 11

Александр Манасян. История и право в переговорных процессах урегулирования карабахского конфликта ……... 21

Владислав Груздев. Предпосылки провозглашения государственности Нагорно-Карабахской Республикой (Арцах) …… 27

Збигнев Шмурло. На периферии Европы, а в центре цивилизационных путей – современные вызовы Армении и Арцаха в сознании жителей Польши …… 35

Сергей Минасян. Некоторые военно-политические итоги «апрельской эскалации» 2016г. в Нагорном Карабахе …….… 48

СЕКЦИЯ ЮРИСПРУДЕНЦИИ

Аветик Арутюнян, Сирануш Петикян. Основные направления совершенствования Конституции Республики Арцах 55

Анаит Манасян. Стабильность и развитие Конституции как важнейшие предпосылки укрепления конституционализма в НКР …… 62

Армен Айрапетян. К вопросу о правовом статусе Нагорно-Карабахской Республики ……..… 69

Анастасия Алборова. Проблема признания юридических актов непризнанных государств в гражданском обороте и нотариальной практике ……..…… 78

Лилит Тадевосян. Взыскание алиментов с родителя на ребенка: законодательное регулирование и судебная практика ……..… 85

Арташес Халатян. Право народа Нагорного Карабаха на самоопределение в контексте консультативного заключения международного суда ООН по делу Косова …… 91